

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏԻ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1880



Կ. ՊՕԼԵՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

7 ԳՈՒՄ-ԳԱՔՈՒ, ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՓՈՂՈՅ 7

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

| | |
|---------------------------|----------------------|
| Սերվիլէն էֆէնտի | Ա. Ա. ք. Ե. Կ. Բ. Գ. |
| Յ. Մէրեէմ-Գուլի էֆէնտի | Բ. » |
| Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան | Կ. » |
| Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան | Ա. Ա. ք. Ե. Կ. Բ. Գ. |
| Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան | Բ. » |
| Միհրան էֆէնտի Չօպանեան | Գ. » |

Ձեռնաստրեան դիւան

Յարաբերութեան դիւան

Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան
Հովհաննէս Քահանայ Մկրեան
Պապի էֆէնտի Պապօեան

Գարեգին էֆէնտի Մէլիքեան
Միհրան էֆէնտի Չօպանեան
Նշան էֆէնտի Օտեան

Դատարանի դիւան

Իրաւաստրեան դիւան

Յարութիւն էֆէնտի Թիւլեան
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Տօքթոս Ռափայէլեան էֆէնտի

Տ. Ներսէս վարդապետ Աղանեան
Տեղեմար էֆէնտի Էքսերեան
Լօլօֆէլ էֆէնտի Պալեօղեան

Կայրաւանքի դիւան

Նախաձեռնութեան դիւան

Սեւտիս էֆէնտի Կիրտաղեան
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Քրիստոստօր էֆ. Ղազարոսեան

Տիգրան էֆէնտի Եռասփեան
Ղազար էֆէնտի Հովսեփեան
Սեւտիս էֆէնտի Քօլօղեան

Համարակալութեան դիւան

Խմբագրութեան դիւան

Յակոբ էֆէնտի Արշակ
Պօղոս էֆէնտի Թորգոմեան
Յովհաննէս էֆէնտի Պոյաճեան

Կարապետ էֆ. Խլիքեան
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան
Արքաճառ էֆէնտի Մարտաշեան

Ն Ի Ս Տ Է

19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1880

Ն.Ո.Ս.Գ.Ա.Հ. — Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան (Առժամեայ կարգեալ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Յ. Մէրեէմ-Գուլի էֆէնտի (Դեր-Ատենապետ)

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍՆԵՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍՆԵՔ

Ա. Վ. ԻճԱԿ

- 1 Կարապետ Եպ. Սերոբեան
- 2 Սիմոն Եպ. Սէֆէրեան
- 3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ. Պ
- 4 Կարապետ Ք. Սէթեան

Բ. Վ. ԻճԱԿ

- 5 Մատթէոս Եպ. Իզմիրլեան
- 6 Պօղոս Վ. Խօրտամեան Բ
- 7 Յովհաննէս Ք. Մկրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան

Գ. Վ. ԻճԱԿ

- 9 Վահան Վ. Տ. Մինասեան Բ Պ
- 10 Յակոբ » Ա. Փափաղեան Բ 2
- 11 Սահակ Ք. Տ. Սարգսեան Բ 2
- 12 Խորէն » Փէլիկեանեան

Դ. Վ. ԻճԱԿ

- 13 Ներսէս Վ. Աղանեան Բ 7
- 14 Սուքիաս Ք. Ստեփանեան Բ 5
- 15 Վրթանէս » Պալեան Բ 7
- 16

Ե. Վ. ԻճԱԿ

- 17 Խորէն Արք. Նար Պէյ Բ Պ
- 18 Յովհաննէս Վ. Փափաղեան Բ
- 19 Գարեգին » Թաթարեան Բ 2
- 20

Բ Բացակայութիւն առաջին
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ
Բ. Պ Բացկ. բանաւոր պատճառաւ

ԵՐԵՍՓՈՒՍՆԵՔ
(Ա. Վ. ԻճԱԿ)

Գումգաբու, Կետիկ փաշա
Է. Գումգաբուի դուրս

- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ 7
- 22 Գէորգ Ստամարաճեան
- 23 Խաչիկ Մանկասարեան Բ 7
- 24 Կարապետ Ազարգամաճեան Բ
- 25 Համբարձում Մաղպուլեան Բ
- 26 Մինաս Գափամաճեան
- 27 Յովհաննէս Պոյաճեան Բ 7
- 28 Ն. Մէղպուրեան Տօքթօր
- 29 Պօղոս Պառնասեան Բ 7
- 30 Սարգիս Աղաբէկեան Բ Պ
- 31 Սահակ Ապրօ Բ Պ
- 32 Սենեքերիմ Մանուկեան Բ 6
- 33 Բարթեղ Քիւրքճիւղաշեան 3
- 34 Ատովմ Տէրոյէնց Բ 7
- 35 Գէորգ Ապտուլահեան
- 36 Յ. Մէրեէմ-Գուլի
- 37 Ա. Ետիս Կիրտաղեան Բ 7

(Բ. Վ. ԻճԱԿ)
Պէլիկաշ

- 38 Անդրանիկ Կրճիկեան Բ 3
- 39 Ալիքսան Խօրտամեան Բ 7
- 40 Բարսեղ Հալաճեան
- 41 Եկեղաբու.
- 42 Մկրտիչ Քիւրքճիւղաշեան Բ 2
- 43 Սեպուհ Մաղաւտեան Բ 7
- 44 Մարուգէ Յրէնկեան Բ 4
- 45 Պօղոս Էքսերեան

Բ. Ետիս Ս. Խաչ
45 Սիմոն Ֆէլիկեան
46 Ստեփան Աղանեան

47 Յ. Շիշմանեան Տօքթօր Բ Պ


48 Ե. Ակիւտար Ս. Կարապետ

- 49 Միհրան Պահճէգափուլեան Բ 2
- 50 Պօղոս Թորգոմեան
- 51 Նիկողոս Ալաճաճեան Բ 7
- 52 Տրդատ Փափաղեան Բ
- (Գ. Վ. ԻճԱԿ)
- Գասթմ բաշա
- 53 Գասպար Չէրաղ Բ 7
- Բէրա
- 54 Արիկ Ռւնճեան Բ 5
- 55 Գրիգոր Սէլիմէճեան Բ 2
- 56 Գրիգոր Օտեան Բ 9
- 57 Սերվիլէն Բ 7
- 58 Ռափայէլեան Տօքթօր Բ 7
- 59 Միքայէլ Մամեան Բ 7
- 60 Կարապետ Քաղաղեան Բ 1
- 61
- 62

Միշազիւղ

- 63 Յակոբ Նորատուէկեան Բ
- 64 Տիգրան Եռասփեան
- 65 Մկրտիչ Գաղանճեան Բ 3
- 66 Ա. Ետիս Գօլօղեան Բ 7
- 67 Նշան Օտեան Բ
- Պէլգօգ Է. Ղայարիտ
- 68 Միքայէլ Մամիկոնեան (Գ. Վ. ԻճԱԿ)
- Քուզկու. Գմաք Է. Իմաստիէ

69 Յովհաննէս Էսաեան Բ 7
70 Ստեփան Պէլիկեան Բ



| | | |
|-----------------------------|------------------------------|-----------------------------|
| Գատրգիւղ | ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ | Մուշ |
| 71 Կարապետ Շահպաղեան Բ 3 | Կարին | 124 Ստեփան փափաղեան |
| 72 Մկրտիչ Մուրատեան Բ 6 | 101 Սիմոն Մաղսուտեան | Տիվրիկ |
| Նարլըգաբու. | Քեօբանեա | 122 Նշան Գարագաշ Բ 2 |
| 73 Յակոբ Եջմէնիճեան | 102 Մ. փափաղեան Տօբթօր Բ 7 | Զեյթուն Է. Մարաշ |
| Եկեղիմանայի Սամարիոյ | Անդրիանուպօլիս | 123 |
| 74 Պօղոս Մկրտիչեան Բ 7 | 103 Վ. Էջն Ապտուլաճ | Տրապիզօն |
| Թօփգափու. | Նիկոմիդիա | 124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 7 |
| 75 Յովհաննէս Մարգարեան Բ | 104 Կարապետ Ս. Իւթիւճեան Բ | Պաղտատ |
| Էյուպ Ս. Եղիա Է. Ս. | Ակն | 125 Մելքօն Իսկէնտէրեան Բ 7 |
| Աստուածածին | 105 Ա. Ետիս Պարոնեան Բ 6 | Տիգրանակերտ |
| 76 Գարեգին Յ. Մէլիքեան Բ | Ղարահիսար | 126 Մինրան Զօպանեան Բ |
| Գուրուբէշմէ | 106 | Վան |
| 77 Աստիա Իկիտպաշեան Բ 2 | Արաբկիր | 127 |
| Հիսար Է. Պօյաճի Գիւղ | 107 Կարապետ Խաչիկեան | Աղբամար |
| 78 Յովհաննէս Արշակունի Բ 7 | Բաղէշ | 128 |
| Նոր Գիւղ Է. Սրենիա | 108 | Հայկա Է. Այնթապ |
| 79 Ղաղար Հովուեան Բ | Պրուսա | 129 |
| Պալատ | 109 Քրիստոստուր Ղազարոսեան | Սեբաստիա |
| 80 Մկրտիչ Գ. Էսսեան Բ 7 | Եւդոկիա | 130 Մկրտիչ Յ. Մէլիքեան |
| 81 Յովհաննէս Կրճիկեան Բ 4 | 140 | Ռուսճուգ |
| 82 Տելեմաք Էքսէրճեան Բ | Ամասիա | 134 |
| Քարակեօմրիակ | 141 Համբարձում Ալաճաճեան | Կարս |
| 83 Սեպուհ Թիւրապեան | Բալու. | 132 Աբրահամ Յ. Սյւլաղեան |
| 84 | 142 Յովհաննէս Ազնաւորեան Բ 5 | Զմշկածագ |
| (Ե. Վ. Էճակ) | Եղեսիա | 133 Համբարձում Սարգէշիշեան. |
| Սամարիա | 143 Յակոբ Իւթիւճեան | Գաղատիա |
| 85 Ալիքսան Պէշիրեան Բ | Մանգրլըս | 134 |
| 86 Եղիազար Մէլիքեան Բ 7 | Հաճըն | 135 |
| 87 Մինաս Ճաֆճաֆեան Բ 2 | 144 | Ատանա |
| 88 Նաղարէթ Շահպաղեան Բ 3 | 145 | Սիւրբ |
| 89 Յարութիւն Թիւլեան Բ 3 | 146 Ռէթէոս Պէրպէրեան | 136 Մատթէոս Ալիքսանեան Բ 7 |
| 90 Յակոբ Արշակ Բ 4 | Թէրիքտաղ | Եօզղատ |
| 91 Սեպուհ Թիւրապեան Բ 5 | 147 Տիգրան Գ. Սինանեան | 137 Լօղօֆէթ Պալիօղեան |
| 92 | Կեսարիա | Մալաթիա |
| 93 | 148 Գէորգ Գըլլճճեան Բ 2 | 138 Գէորգ Վարդանեան Բ |
| 94 | Խարբերդ | Իզմիր |
| Խասգիւղ | 149 | 139 Պապի Պապօեան |
| 95 Առաքել Ալթուն Տիւրքի Բ 4 | Պալքեաթ | Եգիպտոս |
| 96 Ռէթէոս Պէշիրճեան | 140 | 140 Աբրահամ Մուրատեան |
| 97 Սարգիս Աբրահամեան Բ 7 | | |
| 98 Մ. Արծրունի Տօբթօր Վճն | | |
| 99 Սարգիս Քալուքճեան Բ 7 | | |
| 100 Աթանաղինէ Արապեան Բ 7 | | |

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Խնդիր տեղափոխութեան ժողովարանի և բացակայութեան երեսփոխանաց . — Տեղեկագիր Յանձնախմբին :

Բ. Ուղերձ ՚ի պատասխանի Նախագահական գրոյն . — Ծրագիր Ատենապետաց դիւանի :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԷ

Ամենապատեւ Սրբազան Պատրիարքն անձնական տկարութեան պատճառաւ ստիպուած լինելով բացակայ մնալ ժողովէն, ընդ առժամեայ Նախագահութեամբ Գեր. Տ. Սիմօն Եպիսկոպոսի Ալֆէրեան՝ երիցագունին եպիսկոպոսաց, եւ Ատենապետութեամբ Յ. Մէրեւէմ-Գուլի Էֆէնտիի՝ ատենաբ բացուեցաւ ժամ Տին, ի ներկայութեան 32 երեսփոխանաց, որոց թիւը 38ի յանգեցաւ ի վերջէ :

1 .

Վաւերացումն նախընթաց Ե. Է. Զ. Նիստերու ատենագրութեանց :

Ատենապետ Էֆէնտին յայտարարելով թէ ժողովին նախընթաց Ե. եւ Զ. նիստերու ա-

տենագրութիւնները տպագրեալ հաղորդուած են արդէն երեսփոխանաց, դիտողութեան ենթարկեց նախ Ե. նիստի ատենագրութիւնը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Երես 105. էջ Ա. Խօսքիս մէջ հատուած մը կայ սապէս. « Ասկէ քսան տարի առաջ ալ ընկերութիւններ կազմուեցան, բայց կապերով կաշկանդուած էին » : Սոյն վերջին պարբերութիւնը պիտի ըլլայ « Բայց օգնութիւն չգտան ազգին կողմէ » :

Գարձեալ նոյն խօսքիս մէջ ի ստորեւ սա հատուածը կայ. « Եթէ հաստատութիւն գտան եւ սկսան օգուտ յառաջ բերել, պատճառն այն եղաւ որ ազատութիւն ու վստահութիւն գտան ազգին կողմէ » Պիտի յաւելնայ հատուածին վերջը « եւ ժամանակին հանգամանքներէն » :

Ուրիշ դիտողութիւն տեղի չունենալով

Ատենապետ էֆէնտին քուէի կենթարկէ և նիստի տտենագրութիւնն և ժողովը միաձայն եղած զխտորութեամբ հանդերձ ընդունելով զայն՝ ԿԸ ՎԱԽԵՐԷ :

Յետոյ Ատենապետ էֆէնտին ի զխտորութիւն կը հրաւիրէ զերեսփոխանս Զ. նիստի տտենագրութեան վրայ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Երես 419. էջ Բ. Իմ մէկ խօսքս կայ, որ ընդմիջումէ մը յետոյ կսկսի սապէս. « Գարձեալ, ինչո՞ւ պէտք է որ տաներէց քահանայն աթոռ ունենայ. — վասն զի իւր մասնաւոր շահն ունի. ուստի միեւնոյն նկատմամբ ներելի է նաեւ Ամուսնական սենեակին անդամ գանուող քահանային աթոռ ունենալ, երբ դատավարաց միոյն կողմանէ որեւէ ձեւով ժամուց ընդունած լինի» պիտի ըլլայ « ներելի է ժամուց անունով նուէր ընդունիլ դատավարներէն, և դարձեալ ներելի է որ դատաւոր քահանայ մը իւր պաշտօնավարութեան միջոցին դատավարներէ ժողովուրդ ընդունի: Այս զխտորութիւնները կը նեմ, և ըն: » Արդէն միեւնոյն խօսքերը կրկնած և՛մ ուրիշ տեղ, տես Երես 424. էջ Ա. ուր ճշդիւ ու ամբողջ արձանագրուած են խօսքերս :

Երես 424, էջ Բ. Քուէարկութեան բանաձեւին վրայ կարճ խօսք մ'ունիմ, որու ըսկիդքն Երէ բառը յաւելնալով պիտի ըլլայ սապէս « Երէ ըստ իմաստի իմ առաջարկած բանաձեւիս հետ նոյն է, կընդունիմ » :

Երես 436 էջ Ա. Պատասխան մը տուած և՛մ առ Գասպար Զէրազ էֆէնտի. որ կառաջարկէր 45 յօդուածին երկրորդ մասը բառնալ, որ Վիճակային ժողովին մէջ առաջնորդաց ներկայութիւնը կը տրամադրէ: Զէրազ էֆէնտին իւր առաջարկը կը պաշտպանէր սա զլիսաւոր փաստով թէ՛ առաջնորդք, երբ չը հրաւիրուին ժողովին մասնակցելու, այդ տրամադրութեան ուժով իրաւունք կունենան խնդիր յարուցանելու: Այս փաստին դէմ առարկեցի թէ՛ առաջնորդք այդ իրաւունքն ըստ եկեղեցական օրինաց ունին արդէն: Այս կէտը յիշատակուած չեմ գտներ:

Վերջին զխտորութիւն մ'ալ Վարչական կազմակերպութեան ծրագիրն ամբողջ քննուելէ և քուէարկուելէ յետոյ՝ պէտք էր որ անոր բարեփոխեալ օրինակն անցնէր ատենագրութեան վերջը: Բայց ըստ որում չէ անցած, կառաջարկեմ զթ ներկայ նիստի Ատենագրութեան մէջ արձանագրել զայն:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Կարծեմ թէ բաւական չէ միայն ատենագրութեան մէջ զայն անցնել, այլ պէտք է միանգամայն ուրոյն տեսարակով մը հրատարակել, իբր հաստատեալ նոր օրէնք մը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մտոյդ է ինչ զխտորութիւն որ եղաւ Վարչական կազմակերպութեան նոր օրինաց տպագրութեան մասին: Մայր զիւանը մտադիր էր արդէն զայն հրատարակել այդ կրկին ձեւերով, սակայն հարկ եղաւ սակաւ ինչ յետաձգել և բացատրեմ թէ ինչ պատճառաւ:

Նախ որ այդ տպագրութիւնները կատարելու համար պէտք եղածին չափ ժամանակ չկար, երկրորդ սը՝ Օրինաց ծրագիրն իւր առաջին խմբագրութենէն յետոյ՝ թէ Ատենապետաց զիւանին մէջ, և թէ ի վերջէ Ազգ. ժողովոյ քննութեան բովին մէջ զանազան բարեփոխումներ կրեց, որոց մէկ մասն, ինչպէս կը յիշէք, Եկեղեցական երեսփոխանաց կողմէ առաջարկուեցաւ գրաւոր և ընդունուեցաւ: Այս բարեփոխումներն եթէ օրինաց ծրագրին թերին լրացուցին, եղծեցին սակայն անոր լեզուին միակերպութիւնն, և Մայր զիւանը նշմարելով զայս՝ հարկ գտանց քուէարկեալ նոր օրէնքն յուղարկել խմբագրութեան զիւանին՝ որպէս զի լեզուաբանական կարեւոր սրբագրութիւնները կատարէ և վերադարձնէ զայն առ Մայր զիւանն: Հետեւապէս, այժմ Մայր զիւանը կսպասէ որ խմբագրութեան զիւանը կատարէ իւր տշխատութիւնն, և այնուհետեւ, ինչպէս առաջարկուեցաւ, Վարչական կազմակերպութեան նոր օրէնքն ամբողջովի պիտի անցնէ թէ ատենագրութեան մէջ և թէ հրատարակէ ուրոյն տեսարակով:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնագրական զխտորութիւն մ'ունիմ ժողովը կրնայ որ եւ է օրինաց ծրագիր խմբագրութեան զիւանին յղել, սակայն վերջնական քուէարկութենէն առաջ: Արդ՝ զիտել կուտամ Գիւանին որ ժողովն այս ծրագիրը վերջնապէս քուէարկած է արդէն, ուստի ըստ կանոնի չէ կարելի այլ ևւ խմբագրութեան զիւանին սրբագրութեանն յանձնել զայն, որ տիրող օրէնք մ'է այժմ, և միայն գործադրութիւն կը պահանջէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրաւացի է փախաղեան էֆէնտիի զխտորութիւնը, սակայն երբ խմբագրութեան զիւանին ընելիք սրբագրութիւններն ծրագրին զլիտոց և յօդուածոց դասակարգութեան, անոր օրէնագրական ոճին ու յատկաբանութեանց վրայ ըլլան. այս պարագային մէջ՝ ըստ որում ծրագիրն կրնայ մեծ փոփոխութիւններ կրել, որ նաեւ իմաստի մասին այլայլութիւն մը յառաջ բերեն, հարկ կը լինի անշուշտ որ ծրագիրը ժողովին վերջնական քուէէն առաջ յղուի խմբագրութեան զիւանին:

Սակայն Մայր զիւանն այսպիսի մեծ փոփոխութեանց համար չէ որ Վարչական կազմակերպութեան օրէնքն խմբագրութեան զիւանին յղեց, այլ միայն անոր լեզուն միակերպութեան վերածելու համար, զոր կորուսած էր բարեփոխմանց պատճառաւ: Ուստի չեմ կարծեր որ Մայր զիւանն զայն խմբագրութեան զիւանին յղելով՝ կանոնին հակառակ շարժած լինի: Սակայն կը հաւաստէ ձեզ որ եթէ սպասուած սրբագրութիւնները միայն օրինաց ծրագրին լեզուին վրայ չըլլան, և երբ տեսնէ թէ իմաստին մէջ աննշան փոփոխութիւն մը յառաջ եկած է, ոչ Սրբազան Պատրիարք Հօր կը հաղորդէ զայն ի գործադրութիւն, և ոչ հրատարակութեան կաւանդէ, մինչեւ որ ժողովոյդ ուղարկութեան չներկայէ վերստին:

Արշուստ որ Գիւանին այս բացատրութիւնը կը գոհացնէ ժողովը, և հարկ չմնար խնդիր յուղելու այս մասին:

ԶԱՅՆԵՐ. — Շատ աղէկ: Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կենթարկէ նախընթաց Զ. նիստի տտենագրութիւնն և ժողովը միաձայն եղած զխտորութեամբ հանդերձ ընդունելով զայն՝ ԿԸ ՎԱԽԵՐԷ:

2.

Ատենական գործողութեանց քրքեր, Է. Մայր զիւանի անդամոց հրատեղչի խնդիրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական խել մը գործողութիւններ կան. անցեալ նիստին յայտարարեցի ձեզ թէ՛ այս գործողութեանց վերաբերեալ թղթոց մէկ մասը Պատրիարքարանը թողուած էր ցաւալի մոռացմամբ մը. կը կարծէի թէ այս մոռացումը պատահական էր, բայց կերելի թէ սովորական եղած է Պատրիարքարանի պաշտօնակալաց, վասն զի կը տեսնեմ որ այսօր դարձեալ նոյն թղթոց մէկ մասը չէ բերուած ժողովին: Բարասպան մը ուղարկեցի Պատրիարքարան, այդ թղթերը բերելու համար, զորս քիչ մը յետոյ ժողովը պատրաստ կունենայ իւր սեղանին վրայ: Իսկ այժմ անգործ չկենալու համար՝ հարկ կըլլայ որ անցնինք օրակարգին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քանի անգամ է կը պատահի այս մոռացումն, որ անպատուութիւն մ'է ժողովիս դէմ: Մեծ ուղարկութիւն պէտք է ընծայել Ազգ. ժողովին վերաբերեալ գործոց և եթէ մոռացումները կրկնուին այսուհետեւ, ով որ է պատասխանատու պաշտօնակալը, պէտք է պատժել զայն:

ԻԽԹԻԼԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Պատասխանատու պաշտօնեայն Գիւանապետն է անշուշտ, և պէտք չէ այս զանցառութիւնը Պատրիարքարանի բոլոր պաշտօնակալաց վերադրել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանն ամենէն առաջ ինք կը հաստատէ թէ՛ այս տեսակ մտաւորականները ներքին չեն եւ անշուշտ պէտք է որ այլ եւս չկրկնուին : Սակայն հարկ է ըսել նաեւ թէ՛ նոյն իսկ ժողովոյս զիւանն ալ այնպիսի վիճակի մէջ կը գտնուի՝ որ թերեւս Դիւանապետն ալ պատասխանատու չէ այս մտաւորականց : Ատենադպիր էֆէնտիները պաշտօնէ հրաժարած, մերթ կը յօժարին վարել զայն առժամեայ կերպով, մերթ ոչ, եւ այսպէս Մայր զիւանն անկերպարան վիճակի մը մէջ է . ուստի զլիսաւորաբար պէտք է Դիւանին վերակազմութեան գործն կարգադրել, եւ զայն դնել այնպիսի վիճակի մը մէջ, որ կարենայ իւր պաշտօնը կատարել փափաքուած կերպով :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Ինձ կը թուի թէ ամէն խնդրէ առաջ Մայր զիւանին կազմութիւնը կարեւոր է, եւ երբ զիւանն այսպէս յարատեւէ մնալ այս անկերպարան վիճակին մէջ, անշուշտ ժողովին վերաբերեալ գործերը չեն կրնար կանոնաւոր կերպով կատարուիլ : Ուստի ես ստիպողական կը նկատեմ Դիւանին կազմութեան խնդիրն, եւ կառավարիւմ զայն նկատողութեան առնուլ եւ վերջնական որոշում մ'ընել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը ձայնակցիմ այս առաջարկին եւ կը պնդեմ որ ժողովն անմիջապէս Մայր զիւանի անդամոց հրաժեշտի խնդիրն իբր ամենէն աւելի ստիպողական խնդիր՝ ձեռք առնուլ եւ կարգադրէ : Ամէն պարագայի մէջ այս խնդրոյն ստիպողութիւնը կը հաստատուի, եւ ահաւասիկ այժմ իսկ՝ երբ խնդիր ծագեցաւ զիւանական թղթոց նկատմամբ, Մայր զիւանին կազմակերպեալ չըլլալն ցոյց տրուեցաւ իբր պատճառ այս անկանոնութեանց :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Որովհետեւ Դիւանին ներկայ վիճակը ժողովին գործոց համար փաստաբար սկսած է ըլլալ, եւ ալ նոյն կարծիքն ունիմ թէ՛ պէտք է որ Դիւանի անդամոց

հրաժարման խնդիրն առաջնութիւն ունենայ, եւ անմիջապէս նկատողութեան առնուի :

ԵՆՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ես չեմ կարծեր որ Մայր զիւանի անդամոց հրաժարման խնդիրն յուղելով այսօր՝ կարենանք զայն լուծել եւ արդիւնք մը քաղել : Կը յիշէք որ ժողովն ասկէ առաջ Մայր զիւանի անդամոց հրաժարականները մերժած եւ Սրբազան Պատրիարք Հօր յանձնարարած էր անոնց ազգասիրական ըզգացմանց կոչում ընել եւ համոզել որ յանձն առնուն իրենց պաշտօնը : Զգիտենք թէ ի՞նչ եղաւ այս որոշմանց արդիւնքն, եւ Հրաժարողը յանձն առին թէ ոչ իրենց պաշտօնն . վերջապէս սոյն խնդրոյն նկատմամբ այս պահուս անստուգութիւն մը կը տիրէ, որու մէջ չենք կարող խնդրոյն լուծմանն հասնիլ : Ուստի ես կը կարծեմ թէ ամենէն բանաւոր եղանակն է յանձնարարել Դիւանին որ Սրբազան Պատրիարք Հօր հետ բանակցելով տեղեկութիւն ստանայ այս մասին, եւ յառաջիկայ նիստին իրաց փիճակը հաղորդէ ժողովին, օրակարգը անցնելով խնդիրն ի հարկին : Իսկ այժմ՝ պէտք է Օրակարգին անցնիլ, ուր երկու խընդիր ունինք . եւ որովհետեւ երկրորդն՝ այն է ուղերձի խնդիրն՝ ստիպողութիւն ունի, կառավարիւմ առաջնութեան ընծայել անոր, եւ զայն նկատողութեան առնուլ անմիջապէս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը գո՛չ է տեսնելով որ Եռսուֆեան էֆէնտի լուսաբանութիւնը կատարելապէս կը ճշդէ խնդրոյն վիճակն : Ինչ եղանակ որ Եռսուֆեան էֆէնտի առաջարկեց, նոյնը նաեւ Դիւանը մտադիր էր ձեզ ցոյց տալ, խնդրոյն կարգադրութեանը համար . որով՝ ես մանաւանդ ամէնէն աւելի պէտք ունիմ բաղձալու : Մայր զիւանի նորընտիր վեց անդամոց հինգը հրաժարած են, եւ բովանդակ բեռը իմ վրաս ծանրացած է գրեթէ : Այս պաշտօնն եթէ ՚ի սկզբան յանձն առի ես, չէի կրնար ենթադրել անշուշտ որ հրաժարմանց խնդիրն այսպէս առկախ ու տարտամ պիտի մնայ ընդ երկար, եւ իմ վրաս ծանրաբեռնէ այն ամեն պարտաւորութիւն, որու Դիւանի անդամը հաղորդ

ենս եթէ այս փիճակը շարունակէ տակաւին, այժմէն կը յայտարարեմ բացարձակ թէ ես ուրիշներէ ոչ նուազ զբաղեալ եմ եւ ժամանակ կը պակսի ինձ այդ աշխատութիւնը միայնակ տանելու :

Սակայն ինչ որ ալ լինի, չեմ կարծեր որ կարելի ըլլայ այսօր խնդրոյն ելք տալ այս անըստոյգ փիճակին մէջ . ուստի եթէ կը հաւանիք՝ Դիւանը Եռսուֆեան էֆէնտի առաջարկին համեմատ յանձն կառնուլ բանակցիլ Ամեն Սրբազան Պատրիարք Հօր հետ եւ այս հրաժարմանց խնդրոյն վրայ ժողովին նախորդ որոշման արդիւնքը իմանալով՝ ըստ այնմ զայն յառաջիկայ նիստին կը ներկայէ ժողովիք ի հարկին օրակարգն անցնելով խնդիրն :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Եռսուֆեան էֆէնտին գիտել կուտայ մեզ որ Դիւանի անդամոց հրաժեշտի խնդիրը Սրբազան Պատրիարք Հօր յանձնուած է, եւ կառարկէ թէ այս մասին նորին Սրբազանութենէն տեղեկութիւն չընդունած՝ չէ կարելի խնդիրը նկատողութեան առնուլ եւ որոշում մ'ընել : Կարծեմ թէ այս յանձնարարութիւնն ըլլալէ ի վեր երկու ամիս անցած է, եւ զարմանք են որ մինչեւ ցարդ տեղեկութիւն մը չէ հաղորդուած մեզ այս խնդրոյն վրայ, որ այսքան մեծ կարեւորութիւն ունի : Ես ցաւ կը յայտնեմ որ մեր սովորական անփութութեամբն այս հրաժարմանց խնդիրն առկա թողած ենք այսպէս, եւ եթէ այս ընթացքով շարունակենք, չեմ կարծեր որ ժողովը կարենայ կանոնաւոր ընթացք մ' ունենալ : Ուստի կը պնդեմ միշտ թէ այս հրաժարմանց խնդիրը պէտք է առաջնութիւն ընդունի, եւ անմիջապէս նկատողութեան առնուի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ըստ ամենայնի համամիտ եմ Պալեօզեան էֆէնտի . եւ կը ցաւիմ մանաւանդ որ նոյն իսկ մենք ենք հեղինակն այս վիճակին : Հրաժարմանց խընդիրներու մէջ միշտ գեղեկոտ ընթացք մը բռնած եւ կնճիռներու տեղի տուած ենք : Շատեր բացակայ կը մնան նիստերէն, եւ օրինօք հրաժարեալ կը համարուին . սակայն մենք նոր ի նորոյ խնդիրներ կը յարուցանենք, եւ չենք

ուղեր դանձնք հրաժարեալ համարիլ . շատեր պաշտօնի կը կոչուին եւ ինքնակամ կը հրաժարին, բայց չենք ընդունիր իրենց հրաժեշտն եւ կը պնդենք որ անպատճառ յանձն առնուն պաշտօնն : Եթէ ընտրեալը ժամանակ ունենան ծառայելու, անշուշտ կընդունին պաշտօնն, քանի որ ազգասիրութիւն ունին. եւ եթէ կը հրաժարին՝ ըսել է չեն կրնար ի՞նչ հարկ ուրեմն պնդելու եւ Սրբազան Պատրիարքին աղաչելու որ համոզէ դանձնք, եւ ուրիշ այս տեսակ այլ եւ այլ միջոցներ ի գործ դնելու : Ես միշտ այն կարծիքն ունեցեր եմ, որ երբ մէկուն բերնէն հրաժեշտ բառը կելնէ, առանց վարանելու անմիջապէս ընդունիլ պէտք է, եւ այն ատեն միայն կարելի է ազատիլ այս զրժուարութիւններէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Զեմ կարծեր որ այս խնդրոյն վրայ, որ իբր միջադէպ ծագում առաւ ուրիշ խնդրէ մը, վիճարանութիւնն երկարել հարկ ըլլայ : Արդէն պէտք եղած լուսաբանութիւնները տրուեցան, եւ կրնանք փակել այս միջադէպը : Երկու առաջարկ կայ այս խնդրոյն նկատմամբ . մին՝ որ Պալեօզեան էֆէնտի կողմէ կուգայ եւ Ղազարոսեան ու Գափամաճեան էֆէնտիներն իրեն ձայնակից կը գտնէ, կը պահանջէ այս հրաժարմանց խնդիրն այսօր անմիջապէս ի նկատի առնուլ, եւ լուծել . իսկ միւսն՝ որու հեղինակն է Եռսուֆեան էֆէնտին, կուզէ յառաջիկայ նիստին վերապահել խնդիրը, Դիւանին յանձնելով որ Սրբազան Պատրիարքէն տեղեկանայ թէ հրաժարմանց մասին Ազգ. ժողովոյ տուած վերջին որոշման գործադրութեան արդիւնքը ի՞նչ եղած է :

Անոնք որ այս խնդրոյն մէջ աճապարանք ցոյց կուտան, պէտք է յիշեն թէ Օրակարգը չանցած խնդիր մը չենք կարող այսօր յեղակարծ յուղել եւ լուծել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջելով) Բայց խնդիր չէ այս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Կը

սխալիք՝ երբ կը կարծէք թէ խնդիր չէ այս . խնդիր է՝ վասն զի հրաժարականներու կը վերաբերի, խնդիր է՝ վասն զի ընտրութիւն կայ կատարելի, եւ վերջապէս ժողովն այս մասին նախորդ որոշում մ'ունի, որու գործադրութիւնը Սրբազան Պատրիարք Հօր յանձնած է եւ այս մասին դեռ տեղեկութիւն մը տրուած չէ ժողովին ոչ ուղղակի եւ ոչ անուղղակի :

Մի կարծէք սակայն որ ի՞նչ այս խնդիրը ցարդ ժողովիդ չներկայացաւ, պատճառն անտարբերութիւնն է որով Գիււանը չկանխեց խնդիրը ձեռք բերելու : Այս յետաձգումն իւր պատճառն ունէր . ժողովիդ վարչական կազմակերպութեան օրինաց քննութեամբն զբաղեալ է, եւ Գիււանն արժան չգտնեց միջանկեալ խնդիր յարուցանել եւ ժողովիդ ժամանակը խորել : Իսկ այսօր որքան ալ խօսինք այս խնդրոյն վրայ չեմ կարծեր որ կարենանք լուծում մը ձեռք բերել, ուստի եթէ կը հաճիք Նուսուֆեան էֆէնտի առաջարկած կերպով կը վերապահենք զայն յառաջիկայ նիստին :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք առի պատասխանելու համար Քրիստոստուր էֆէնտի այն դիտողութեան, որով ուղեց ըսել թէ պաշտօնի կոչուողներն ազգասիրութեան պակասութեան պատճառաւ կը հրաժարին : Այսպիսի դիտողութիւն մը ես չեմ կրնար ընդունիլ հրաժարելոց համար . . . :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես այդպիսի խօսք մը չըրի :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ուրեմն յետս կը կոչէք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այդպէս չըսի որ յետս կոչեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թիւրիմացութիւն մը կը նշմարեմ եւ ներեցէք որ ուղղեմ զայն : Ինչ որ խօսեցաւ այդ մասին Քրիստոս-

տուր էֆէնտին, սա խմաստն ունէր թէ ընտրեալք երբ կը հրաժարին՝ ազգասիրութիւն ունենալով հանդերձ, ըսել է թէ անկարող են ծառայելու, եւ հետեւցուց թէ անոնց հրաժեշտը խնդրոյ ներքեւ դնել աւելորդ է :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Ես բոլորովին աւելորդ կը համարիմ Սրբազան Պատրիարք Հօր տեղեկութեանց սպասել, Գիււանի անդամոց հրաժարմանց խնդիրը լուծելու համար : Յայտնի է արդէն որ առաջին Ատենապետը, Սէրվիլէն էֆէնտին, կրկին կրկին յայտարարած եւ պնդած է թէ ինք չէ կարող ժողովին մէջ պաշտօն ընդունիլ, ուստի իւր տրամադրութիւնը ծանօթ է արդէն . իսկ երրորդ Ատենապետ Մամիկոնեան էֆէնտին ներկայ է արդէն, անոր դիտաւորութիւնն ալ ժողովը կըրնայ ուղղակի իրմէ հասկնալ . հրաժարեալ Ատենապետի էֆէնտիներն ալ կարծեմ ներկայ են, ուստի Սրբազան Պատրիարքէն սպասելիք լուր մը չունինք, եւ կրնանք այսօր խընդիրը լուծել եւ ի հարկին նոր ընտրութեանց ձեռնարկել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ խնդիրն յառաջիկայ նիստին թողուլ կառաջարկուի, ոչ թէ միայն Սրբազան Պատրիարքէն տեղեկութիւն ստանալու համար է, այլ մասնաւոր այն պատճառաւ որ հարկ է կանխաւ օրակարգն անցընել խնդիրն, եւ այնուհետեւ տնօրինել զայն :

ՉԻՐԱԶ Գ. ԷՖ. — Ես Քրիստոստուր էֆէնտի համամիտ եմ, միայն թէ կը փախաքիմ փաստ մ'ալ յաւելուլ անոր դիտողութեանց : Այս խնդրոյն մէջ սկզբունքի կէտ մը կայ, եւ զայն պէտք չէ անտես թողուլ : Գործադիր իշխանութիւնը չկրնար երբէք Օրէնսդիր ժողովին գործոց միջամուխ լինիլ . այսպիսի միջամտութիւն մ'երբ վարչութեան կողմէ տեղի ունենայ, մենք պէտք է բացարձակ մերժենք զայն . սակայն մեր գործադիր իշխանութիւնն այսպիսի միջամտութեան մը թեկնածու չէ, այլ ընդհակառակն մենք ենք որ զայն շարունակ կը հարկադրենք մեր ներքին գոր-

ծոց միջամտելու, միշտ այս տեսակ յանձնարարութիւններ ընելով : Այս ընթացքն յոռի սկզբան մը կառաջնորդէ դմեզ, ուստի կառաջարկեմ միանգամ ընդ միշտ վերջ տալ այս ընթացքին :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Երբ ասկէ առաջ Գիււանի անդամոց հրաժեշտի խնդիրը կը յուղուէր յատենի աստ, պատիւ ունեցայ յայտարարելու թէ քանի որ ընտրեալք կը հրաժարէին եւ կը պնդէին՝ անպատեհ էր անոնց հրաժարականը մերժել : Սակայն ժողովը կարեւորութիւն չընծայեց այս դիտողութեան, եւ անոնց հրաժարականները մերժելով Սրբազան Պատրիարք Հօր յանձնեց յորդորել զանոնք իրենց յանձնուած պաշտօնն ստանձնելու :

Եթէ չեմ սխալիր այս յանձնարարութիւնն եղաւ այն պայմանաւ որ մինչեւ տամս եւ հինգ օր վերջնական արդիւնքը հաղորդուի ժողովին, սակայն կերեւի թէ Սրբազան Պատրիարքն իւր ծանր եւ բազմազան զբաղմանց պատճառաւ չէ կրցած այս խնդրով զբաղիլ, եւ իւր բանակցութեան արդիւնքը մեզ հաղորդել : Եւ որովհետեւ կըսուի թէ Սէրվիլէն էֆէնտին կը պնդէ իւր հրաժեշտին վրայ, եւ Մամիկոնեան էֆէնտին եւ Գիււանի միւս հրաժարեալ անդամք ներկայ են, ուստի պատճառ մը չեմ տեսներ եւ ես խնդիրը մինչեւ յառաջիկայ նիստ յետաձգելու, եւ կարծեմ թէ կրնայ այսօր նկատողութեան առնուիլ եւ վերջնապէս կարգադրուիլ Գոհ ենք որ Մէրեթեմ-գուլի էֆէնտին իւր պաշտօնը կը շարունակէ, բայց ինչպէս լսեցինք պահ մ'առաջ, նա եւս կը գանգատի թէ բովանդակ բեռն իւր վրայ մնացած է, եւ կը յայտարարէ թէ իւր զբաղումները չեն ներեր միայնակ վարել Գիււանի անդամոց պաշտօնն : Ահաւասիկ այս ալ ուրիշ պատճառ մ'է խնդրոյն ստիպողութիւն ընծայելու :

ԵՆԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կը ցաւիմ որ պատուարժան պաշտօնակիցներս այս խընդրոյն նկատմամբ այնպիսի կերպով մը խօսեցան, որպէս թէ գիտակ չըլլային մեր գործոց ընթացքին, եւ այս առթիւ սկզբան խնդիր մ'ալ յուղե-

ցին, որ թէեւ անվիճելի է, սակայն վրիպեցաւ իրենց ուշադրութենէն սա կէտը թէ ի՞նչ պարագաներու ներքեւ կը կատարուին ընտրութիւններն մեր մէջ, եւ ի՞նչպէս կընդունուին պաշտօններն :

Իրաւ է որ երբ երեսփոխան մը պաշտօնի կը կոչուի, անշուշտ զոհողութիւն մը կը պահանջուի անկէ, սակայն կարծեմ թէ չկըրնար պահանջուիլ նաեւ որ անպատճառ դործոն պաշտօն մ'ալ ստանձնէ, որու պարտաւորութիւններն աւելի ծանր են, եւ աւելի ժամանակ եւ զոհողութիւն կը պահանջեն, զոր անշուշտ ամէն երեսփոխան չկրնար տանիլ : Մեր մէջ այս տեսակ պաշտօններու յարմար անձինք սահմանափակ թուով են, ընտրութեանց ատեն միշտ քուէները կերթան զանոնք կը գտնեն, եւ բնականաբար հրաժարականներ կը տեղան : Տակաւին մենք չհասանք այն վիճակին որ Քրիստոստուր էֆէնտի փախաքած կերպով ընտրուողն ելնէ ըսէ ինքնաբեր թէ կընդունի պաշտօնը :

Ուստի ընտրութիւններն յաջողցնելու համար հարկ կըլլայ հրաժարականները մերժել եւ ընտրեալներն յորդորել, եւ այս կերպով շատ անգամ տեսնուած է որ անոնք որ յօժար չէին պաշտօնն ի սկզբան ընդունելու, ստիպմանց առջեւ կը հարկադրին զոհողութիւնն յանձն առնուլ, եւ իրենց ծառայութիւնը նուիրել : Չոր օրինակ, Մամիկոնեան էֆէնտին որ Մայր դիւանի հրաժարեալ անդամներէն մին է մասնաւոր տեսակցութեան մը մէջ կըսէր ինձ անցեալ օր, թէ երբ իւր անդամակիցները յօժարին պաշտօնն ընդունելու, ինք ալ կը համակերպի անոնց : Ահաւասիկ այս պատճառներու համար հարկ եղաւ յանձնարարել Ս. Պատրիարք Հօր իրրեւ նախագահի Ազգային ժողովոյ, որ փորձէ համոզել հրաժարեալներն, եւ չէ թէ այս յանձնարարութիւնն եղաւ նորին Սրբազանութեան, Ազգ. ժողովոյ գործոց մէջ գործադիր իշխանութեան մատը մտցնելու համար, ինչպէս կըսէր Չերազ էֆէնտին :

ՉԻՐԱԶ Գ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ես չըսի թէ մասնաւորապէս այդ նպատակաւ խնդիրը յանձնարարուած է Սրբազան Պատրիարք հօր,

այլ առաջարկեցի այդ սովորութիւնն ի բաց թողուլ :

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — (Շարունակելով) Ինչ որ է, թերեւս սխալ հասկցած ըլլամ Այժմ կեդրակացնեմ խօսքս : Եթէ խնդիրն այսօր ձեռք առնունք, չկրնար գործնական արդիւնք մը յառաջ բերել, վասն զի երբ վիճարանութենէն յետոյ կարգն ընտրութեան գայ, ըստ որում խնդիրն օրակարգին մէջ անցած եւ երեսօխոսանաց հաղորդուած չէ, չպիտի կըրնանք այսօր ընտրութեան ձեռնարկել, այլ պիտի ստիպուինք արդէն յառաջիկայ նիստին վերապահել : Ուստի լաւագոյն է որ ըզդուշանանք այժմէն աւելորդ վիճարանութեանէ մը, եւ խնդրոյն նկատառումն յառաջիկայ նիստին վերապահենք, յանձնելով Գիււանին որ Սրբազան Պատրիարքէն տեղեկութիւն ստանայ այս մասին, եւ ըստ այնմ խնդիրն օրակարգն անցնելով բերէ յառաջիկայ նիստին :

ՄԿՐԵԱՆ Տ. Յ. ՔԶՆՅ. — Կը ձայնակցիմ :

ԶԱՅՆԵՐ. — Քուէ : քուէ :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Կը համակերպիմ Եռուսուֆեան էֆէնտի առաջարկին, այն սլայմանաւ սակայն որ Գիււանի կազմակերպութեան խնդիրն յառաջիկայ նիստէն անդին չը մնայ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ կը համակերպիմ նոյն կերպով :

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ կընդունիմ այս խնդրոյն յետաձգումն մինչեւ յառաջիկայ նիստ, բայց կը պնդեմ թէ այսուհետեւ պէտք չէ երբէք հրաժարականներն խնդրոյ ներքեւ դրուին, այլ անմիջապէս ընդունուելու են :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մայր դիւանի անդամոց հրաժեշտի խնդիրն թէեւ վերջապէս սխալ ներկայանար ժողովին, սակայն մասնաւոր դէպք

մ'այն է ատենական գործողութեանց թղթերուն Պատրիարքարանի մէջ մոռցուիլը, Գիււանի անդամոց հրաժեշտի խնդիրն եւ ամբողջացման պէտքն յիշեցուց մեզ եւ վիճարանութիւն մ'արժարծեց այս մասին, որմէ երկու առաջարկ երեւան եկաւ. սակայն միոյն հեղինակն իւր ձայնակիցներով յարեցաւ միւս առաջարկին, որ Եռուսուֆեան էֆէնտի կողմէ ներկայացեալ էր, եւ որ կուզէր Մայր դիւանի անդամոց հրաժեշտի խնդիրն յառաջիկայ նիստին վերապահել, Գիււանին յանձնելով որ Սրբազան Պատրիարքէն տեղեկանայ արդիւնքն այն բանակցութեան, զոր Նորին Սրբազնութիւնն ունեցած է հրաժարելոց հետ իրենց պաշտօնն ընդունել տալու համար, եւ եթէ հրաժարմանց խնդիրը ղեռ չէ վերջացած, զայն օրակարգն անցնէ եւ յառաջիկայ նիստին բերէ ժողովին :

Արդ՝ քուէի կը դնեմ այս առաջարկն :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին սոյն բանաձեւով քուէի կը դնէ Եռուսուֆեան էֆէնտի առաջարկն, եւ ժողովը միաձայն կ'ընդունի զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ օրակարգին պիտի անցնինք, բայց այս մասին ալ Եռուսուֆեան էֆէնտի առաջարկ մ'ունի, այն է ուղերձի խնդրոյն, որ օրակարգին մէջ երկրորդ տեղը կը բռնէ, ստիպողութիւնն եւ առաջնութիւնն ընծայել :

Այս մասին եւս ժողովին քուէն կը խընդրեմ օրակարգն անցնելէ առաջ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Եռուսուֆեան էֆէնտի առաջարկն եւ ժողովը միաձայն ընդունի ինչպէս ըստ վերջին քուէի, որ օրակարգին մէջ երկրորդ տեղը կը բռնէ, ստիպողութիւնն եւ առաջնութիւնն ընծայել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մայր դիւանի անդամոց հրաժեշտի խնդիրն թէեւ վերջապէս սխալ ներկայանար ժողովին, սակայն մասնաւոր դէպք

Օ Ր Ա Կ Ա Ր Գ



Ուղերձ ի պատասխանի Նախագահական զըրոյն. — Երազիր Ատենապետաց դիւանի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենապետաց դիւանն բերաւ վերջապէս ծրագիրն ուղերձին, զոր ժողովը ըստ կանոնի պարտաւոր է մատուցանել Սրբազան Պատրիարք Հօր ի պատասխանի իւր նախագահական գրոյն, զոր Նորին Սրբազնութիւնը ժողովոյն ներկայ տարուոյն բացման առթիւ ուղղած էր առ Տ. Մատթէոս Եպիսկոպոս : Ատենապետաց դիւանին կողմէ Եռուսուֆեան էֆէնտին ծրագիրը պիտի հաղորդէ ժողովին, ուստի կը հրաւիրեմ զինքըն ի բեմ, զայն կարգալու համար :

Հետեւապէս Եռուսուֆեան էֆէնտին կ'ընթեռնու ուղերձի ծրագիրը : (*)

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը տեղեկացաւ ուղերձին պարունակութեան. արդ վիճարանութիւնը բացուած է անոր վրայ, եւ կը հրաւիրեմ Երեսօխոսան էֆէնտիններն իրենց կարծիքն յայտնել :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ես կառաջարկեմ այդ ուղերձի ծրագիրը վիճարանութեան ենթարկելէ առաջ՝ ատենադրութեան մէջ անցնել եւ հաղորդել Երեսօխոսանաց, որպէս զի կարենան մտադրութեամբ զայն կար

(*) Գիււանը պատշաճ դատեց սոյն ծրագիրն յաջորդ նիստի զոնփակ մասին ատենադրութեան մէջ արձանագրել :

դալ, ուսումնասիրել եւ իրենց կարծիքը յայտնել յառաջիկայ նիստին : Այդ գրութիւնը բաւական երկար է, եւ հետեւապէս դժուար ոչ միայն ինձ, այլ եւ ուրիշներու համար, միակ ընթերցմամբ ըմբռնել անոր պարունակութիւնն ամբողջ ու կատարեալ կերպով, եւ կարծիք մը կազմել :

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը կրկնեմ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ այդ առաջարկը օգտակար կը համարիմ եւ միանգամայն կառաջարկեմ գոնփակ նիստով կատարել ուղերձին վիճարանութիւնը :

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Պատուարժան պաշտօնակցացս առաջարկութիւններն սկզբամբ օրինաւոր կը գտնեմ, բայց կարծեմ թէ այլ եւս ժամանակն անցած է անոնց գործադրութեան : Անշուշտ անօգուտ չէր լինէր եթէ ուղերձի ծրագիրն ժամանակին տպագրուած եւ երեսօխոսանաց հաղորդուած ըլլար : Բայց քանի որ այսպէս չէ եղած, այլ եւս անոր տպագրութեան սպասելու պէտք չկայ : Արդէն ուղերձին մատուցումն շատ ու շատ յապաղեցաւ, եւ իւր կարեւորութիւնը գրեթէ սկսած էր կորսնցնել, երբ Վարչական կազմակերպութեան նոր օրէնքը վրայ հասնելով՝ նոր կարեւորութիւն մ'ընծայեց ուղերձին, զոր պէտք է այլ եւս առանց ժամանակ կորսնցնելու մատուցանել Սրբազան Պատրիարք Հօր, որպէս զի կարելի լինի Վարչութեան կազմութիւնն կատարել :

Գիտէք որ Ս. Պատրիարքը ժողովին ուշադրութեան յանձնած էր ազգային գործոց ներքին վիճակն եւ ժողովն իբր դարման այս վիճակին՝ Վարչական կազմակերպութեան նոր օրէնքը քուէարկած էր, սակայն մինչեւ որ ուղերձը չքուէարկուի կարելի չէ զիւրութեամբ վարչական պաշտօնն ստանձնող անձինք գտնել : Վերջապէս ես հարկ չեմ տեսներ այժմ ոչ ուղերձին տպագրութեան սպասելու, եւ ոչ գոնփակ նիստով վիճարանելու անոր վրայ : Արդէն Ատենապետաց դիւանն

բաւական վիճարանած եւ այնպէս ծրագրած է ուղերձը, կը բաւէ ըստ իս նոյն ծրագիր ժողովիս մէջ անգամ մ'ալ կարգալ, կարեւոր դատուած բարեփոխումները կատարել, եւ քուէարկել այսօր:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Եռուստիան էֆէնտիի յայտարարութենէն այնպէս կը մըրընեմ թէ նոր վարչութիւնը կազմելու ձեռնարկուեր է, սակայն պաշտօնի կոչուող անձինք չեն յօժարեր ուղերձը չքուէարկուած պաշտօն ստանձնել, եւ այս պատճառաւ յետաձգուեր է ընարութիւնը:

Այս պարագան անյայտ է մեզ, վասն զի ի պաշտօնէ տեղեկութիւն մը տրուած չէ այս մասին. ուստի չենք կարող զայն պատճառ մը համարիլ աճապարելու, եւ ուղերձն այսօր շտապաւ քուէարկելու:

Ուղերձին նպատակն է Սրբազան Պատրիարք Հօր կամ Վարչութեան արարքը քննադատել, եւ այս առաջին անգամն է որ Ազգ. ժողովն ուղերձով մը պիտի պատասխանէ Ս. Պատրիարք Հօր զրոյն. ուստի պէտք է որ իւր նշանակութեան արժանի կարեւորութիւնն ըստանայ այն. եւ այս պատճառաւ է որ կուզուի զայն մինչեւ յառաջիկայ նիստ յետաձգել, որպէս զի երեսփոխանք ուսումնասիրեն եւ կարենան առաջարկել ինչ բարեփոխում որ արժան դատին:

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Եթէ առաջարկեցի որ կրկին ընթերցուի մը յետոյ՝ ուղերձը վիճարանութեան ենթարկուի եւ այսօր քուէարկուի, ճիշտ այն պատճառաւ է, որ առաջին անգամ այսպիսի ուղերձ մը կը մատուցուէր Սրբազան Պատրիարք Հօր, պատճառ մը, որով ուրիշներ յետաձգել կուզեն զայն: Ուրիշ տարիներ երկար վիճարանութիւններ կրնան ըլլալ, բայց այս անգամ ուղերձը փութացնելու հարկ մը կայ, մանաւանդ որ Վարչութեան պաշտօնին կոչուող անձինք իրաւունք ունին անշուշտ սպասելու ուղերձին քուէարկութեան, վասն զի պէտք է գիտնան ժողովին կամքն, որ պիտի յայտնուի ուղերձով, եւ

այնպէս զան իրենց պաշտօնն ընդունելու: Այս կէտն՝ որու դէմ Փարիզեան էֆէնտի առարկութիւն ըրաւ, կարծեմ շատ իրաւացի է. ուստի պատշաճ չեմ տեսներ երկարել այս գործն:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես իբր առաջարկի հեղինակ օգտակար կը դատիմ ուղերձին վիճարանութիւնը գոնէ նիստ մը յետաձգել: Ուղերձին նպատակն ինչպէս գիտել տուաւ Փարիզեան էֆէնտին, քննադատել է Սրբազան Պատրիարքին կամ Վարչութեան արարքն, եւ միանգամայն ապագային մէջ անոնց բռնելիք ընթացքը գծել, եւ այս մասին ժողովին կամքն ու զգացումներն յայտնել, որպէս զի ըստ այնմ շարժին: Այս տեսութեամբ ուղերձին խմբագրութիւնը մեծ ուշադրութիւն պէտք է դրաւէ, եւ աճապարանօք չկրնար որոշում տրուիլ: Աճապարանաց մէջ սխալ քայլեր կրնան առնուիլ, եւ վնասաբեր հետեւանքներ ծագիլ. սակայն նիստ մը յետաձգելով վնաս մը չկրնար յառաջ գալ, այլ ընդհակառակն կրնանք օգուտ քաղել եւ խնդիրն ուսումնասիրելով լուսաւորուիլ: Այս պատճառներով յետաձգումն կարեւոր կը դատիմ, եւ եթէ տասն եւ հինգ օրուան միջոց շատ կը թուի կառավարկեմ յառաջիկայ նիստն ութ օրէն գումարել:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ ոք Վարչութեան ձեռքը կատարած է, եւ ոչ իսկ ուղերձի ծրագրին մէջ անոր նկատմամբ խընդիր մը կամ ակնարկութիւն մը կայ. հետեւապէս անոնք որ վարչական նոր պաշտօնէութեան կը կոչուին եւ յօժար են խնդրուած ծառայութիւնը մատուցանելու ազգին, ուղերձին քուէարկութեան սպասելու պէտք չունին. իրենց առջեւ բաց է գործելու ասպարէզն, օրէնքն դժած է իրենց պաշտօնն եւ պարտաւորութիւնն. ուստի ընտրելիներն ո՛վ որ ալ լինին, կրնան ստանձնել պաշտօնն եւ գործել:

Ինչպէս յայտարարեցի արդէն, այս առաջին անգամն է որ Ազգ. ժողովը ուղերձ մը

պիտի քուէարկէ. արդէն պարագաները ծանր են, եւ ներկայացեալ ծրագրին պարունակութիւնն ալ բաւական ծանրակշիռ, ուստի լուրջ քննութիւն մը հարկաւոր է այս ծրագրին վրայ եւ պէտք է միջոց տալ երեսփոխանաց, որ կարենան պայծառ կերպով ըմբռնել ծրագրին իմաստն եւ դադարիար մը կազմել: Անշուշտ ինչ որ 5—6 անձի մէջ խմբագրուած է, երբ 50—60 անձանց կողմէ քննութեան առնուի, կրնան այնպիսի իրաւացի դիտողութիւններ յառաջ գալ, բարեփոխումներ առաջարկուիլ, որոց նոյն իսկ ծրագրին հեղինակներն հաւանին: Ուստի յետաձգման մասին Պէրպէրեան էֆէնտիի առաջարկը բանաւոր կը գտնեմ եւ քուէ կառավարկեմ:

ՁԱՅՆԵՐ. — Քուէի դրէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսից կարգն սպանեցաւ եւ ժամ է այլ եւս ժողովին քուէն խնդրելու:

Երկու գլխաւոր առաջարկ կայ. մին՝ որուն հեղինակն է Պէրպէրեան էֆէնտի, կուզէ ուղերձին վիճարանութիւնն յառաջիկայ նիստին վերապահել. սոյն առաջարկին յարելով նաեւ Գալիսիական էֆէնտին ինքն ալ սա պայմանը կը կցէ որ դռնփակ նիստով կատարուի ուղերձին վիճարանութիւնն, եւ ութ օրէն տեղի ունենայ նիստն: Իսկ երկրորդ առաջարկը՝ զոր Եռուստիան էֆէնտին կը ներկայէ Ատենապետաց դիւանին կողմէ, կուզէ այսօր ուղերձն նկատողութեան առնուիլ եւ քուէարկել:

Արդ՝ ամենէն առաջ սա կէտին վրայ ժողովին քուէն պիտի խնդրեմ թէ կը հաճի՞ ըստ առաջարկի Պէրպէրեան էֆէնտիի՞ յառաջիկայ նիստին թողուլ ուղերձին վիճարանութիւնն, թէ ոչ:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին սոյն բանաձեւով խնդիրը քուէի կը դնէ եւ ժողովըն ըստ առաջարկի Պէրպէրեան էֆէնտիի՞ 10 քուէի ընդդէմ՝ 15 քուէով ԿՈՐՈՇԷ յառաջիկայ նիստին թողուլ՝ ուղերձին վիճարանութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ ժողովին կարծիքն պիտի խնդրեմ սա կէտին վրայ թէ յառաջիկայ նիստն ե՞րբ գումարել արժան կը դատի, ըստ սովորութեան 15 օրէն թէ ոչ ութ օրէն:

ՁԷՐԱԶ Գ. ԷՖ. — Ես կառավարկեմ յառաջիկայ նիստը գումարել ութ օրէն, եւ որովհետեւ կրնայ առարկուիլ թէ մինչեւ այն ատեն ստենագրութիւնը չկրնար տպագրեալ հասնիլ երեսփոխանաց, այս կէտին համար եւս կառավարկեմ որ ուղերձին ծրագրին առանձինն տպագրուի եւ ցրուի:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ ծրագրին ոչ տեսնագրութեան միջոցաւ հրատարակելու եւ ոչ առանձինն տպագրելու պէտք կայ, այլ կրնայ ձեռագիր պատրաստուիլ եւ երեսփոխանաց հաղորդուիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս յայտարարեցի, խնդրոյն քուէարկելի կէտն սա է այժմ թէ ժողովն երբ արժան կը դատի գումարել յառաջիկայ նիստն: Ուստի այս կէտին վրայ ժողովին որոշումը կը խընդրեմ:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին խընդիրը քուէի կը դնէ, եւ ժողովը ԿՈՐՈՇԷ յառաջիկայ նիստն գումարել ութ օրէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուղերձին ծրագրին անշուշտ պէտք է որ յառաջիկայ նիստն առաջ երեսփոխանաց ձեռքը գտնուի, որպէս զի կարենան իմաստասիրել զայն: Եւ որովհետեւ ատենագրութիւնը չկրնար հասնիլ այնքան կանուխ որ երեսփոխանք կարենան ծրագիրը գտնել անոր մէջ եւ ընթերցուիլ, բնական է որ ուրոյն տպագրուելով երեսփոխանաց հաղորդուի: Ալաճաճեան էֆէնտին միջանկեալ կերպով կառավարկէ որ ոչ Ատենագրութեան միջոցաւ եւ ոչ առանձինն հրատարակուի, այլ ձեռագիր հաղորդուի երեսփոխանաց. բայց ըստ որում իւր առաջարկը կրկնող չունի, չեմ կըրնար քուէի դնել զայն, եւ կը վերապահեմ

Գիւանին, ծրագիրն յառաջիկայ նիստէն առաջ Երեսփոխանաց հազորդելու համար՝ ինչ որ պէտք է ի գործ դնել : Կը մնայ այժմ դանփակի խնդիրն որոշել . ըստ կանոնի տասն անդամոց խնդրանաց վրայ , որ համառօտիւ պատճառաբանեալ պէտք է լինի , ժողովն անվէճ կորոշէ թէ կո՞ւղէ դանփակ նիստի մէջ նկատողութեան առնուլ ծրագիրն : Սակայն ցարդ այդ առաջարկը գրաւոր չներկայացաւ Գիւանին :

Այս պահուն Գափամանեան էֆէնտին Գիւանին կաւանդէ դանփակի գրաւոր առաջարկն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ ըստ կանոնի տասն անդամոց ստորագրութեամբ դրոշնփակի գրաւոր առաջարկն աւանդուեցաւ մեզ , զոր կը կարգամ :

«Ստորագրեալ երեսփոխանքս կառաջարկենք ուղերձի խնդրոյն վրայ վիճաբանութիւնը դանփակ նստի մէջ կատարել նորա ծանրակշռութիւնը նկատելով»

Երեսփոխանք

- | | |
|---------------------|----------------|
| Բ. Մ. Քիւրքճիպաշեան | Ա. Ա. Այվազեան |
| Մ. Գափամանեան | Ք. Ղազարոսեան |
| Ռ. Յ. Պերպերեան | Ա. Գ. Պեշիբ |
| Ն. Յ. Այաճաճեան | Լ. Պալեօզեան |
| Ս. Պ. Պ. Փափազեան | Գ. Զերազ |
| Յակոբ Իւրիճեան | |

Ծանօթութիւն . — Սոյն ատենագրութեան հետ կցուելով կը հրատարակուի ահաւասիկ Ազգ. ժողովոյ կողմէ քուէարկեալ վարչական կազմակերպութեան նոր օրէնքն , զոր Խըմբագրութեան գիւանն միանգամ աչքէ անցուցած եւ լեզուաբանական քանի մը թեթեւ սըրբագրութիւններ կատարած է , պատկառ կալով սակայն անոր իմաստից , որ կը մնան անեղծ եւ անայլալ : Սոյն օրէնքը տպագրուած է նաեւ ուրոյն տետրակով :

Այս կէտին վրայ ժողովին քուէն կը խնդրեմ այժմ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ խնդիրը եւ ժողովն ըստ առաջարկի տասն երեսփոխանաց , ԿՈՐՈՇԷ ուղերձի խնդիրն դանփակ նիստի մէջ նկատողութեան առնուլ :

Ատենապետ էֆէնտին յայտարարելով որ թէեւ ատենանին փակման ժամը հնչած չէ , սակայն օրակարգի յաջորդ խնդիրը երկար վիճաբանութեան կը կարօտի , որու համար պէտք եղածին չափ ժամանակ չկայ , ժողովին հաճութեամբ կը փակէ ատենանը ժամը 9 1/2 ին :

| | |
|----------------|-----------------|
| Ատենապետ | Ատենապետ |
| Մ. Յ. Մէլիֆեան | Յ. Մէրեթի-ԳՈՒԼԻ |

ՕՐԷՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ

Կ Ա Չ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Ե Ա Ն

ՀԱՍՏԱՏԵՍԼ

ՅԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ծ ՆԻՍՏ Զ. ԲԱՅՄԱՆՆ 1880 ԱՄՔ

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1880

ԳՂՈՒԽ Ա.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. Թուրքիոյ Հայոց Կեդրոնական վարչութեան իշխանութիւնն յանձնուած է Կ. Պօլսոյ Պատրիարքին , որ կը վարէ զայն վարչական խորհրդոյ միջոցաւ : (Տե՛ս յօդուած 8)



ՊԱՏՐԻԱՐԿ

Յօդ. 2. Պատրիարքն Ազգային վարչութեան նախագահն է , նորա գործա-

դիր իշխանութիւնը կը վարէ և Տէրութեան ու Ազգին միջև կեցած յարաբերութեանց պաշտօնական միջնորդն է :

Իւր պարտաւորութիւնն է հսկել Ազգային Սահմանադրութեան և օրինաց անթերի գործադրութեան :

Յօդ. 3. Պատրիարքն առ ինքն եկած պաշտօնական գրերն՝ յետ արձանագրութեան ի դիւանատան՝ կը յանձնէ վարչական խորհրդոյ , կամ այն խորհրդականին՝ որոյ ձեռնհասութեան կը պատկանի . (Տե՛ս Յօդ. 19, 21, 22, 23 24 և 25) . և նոցա որոշումներն՝ ստորագրեալ ընդունելով՝ անմիջապէս կը գոր-

Ճաղրէ պաշտօնական գրութեամբ, զոր իրեն հետ կ'ստորագրէ որոշող մարմինն :

Բայց երբ Պատրիարքն համամիտ չը լինի տրուած որոշման, կը վերագարձնէ զինդիրն 'ի կրկին նկատառումն՝ հանդերձ իւր գիտողութեամբ :

Եւ եթէ համաձայնութիւն չգոյանայ, Պատրիարքը կը ներկայէ զինդիրը վարչական խորհրդոյ՝ երբ անհամաձայնութիւնը խորհրդականաց հետ է, և Ազգային ժողովոյ վճռոյն՝ երբ վարչական խորհրդոյ հետ է :

Յօդ. 4. Պատրիարքն ինքնին կը տնօրինէ և կը գործադրէ այն ամեն խնդիրներն, որ օրինօք նախատեսեալ են, կամ ստիպողական լինելով անյապաղ տնօրէնութեան կը կարօտին :

Սոյն երկուց պարագայից մէջ՝ 'ի գործ դրուած տնօրէնութեանց պատասխանատուն Պատրիարքն է միայն, մինչև որ ձեռնհաս մարմնոյն հաղորդելով ընդունել և արձանագրել տայ զնոսա :

Յօդ. 5. Պատրիարքը կը հսկէ որ վարչական խորհրդականք և եկեղեցական ու աշխարհական ազգային ամեն կարգի պաշտօնեայք իրենց պարտիքն անթերի կատարեն, և երբ Ազգային Սահմանադրութեան և օրինաց առջև անբաւական կամ անաստող գտնուին, Պատրիարքը նոցա պաշտօնանկութիւնը կ'առաջարկէ նոցա վերագաս իշխանութեան, պատճառաբանեալ տեղեկագրով :

Յօդ. 6. Պատրիարքը փոխանորդ մ'ունի, զոր ինք կ'ընտրէ և վարչական

խորհրդոյ հաւանութիւնն ստանալէ յետոյ կ'անուանէ :

Յօդ. 7. Պատրիարքական փոխանորդին պաշտօնն է՝ նշանտուութիւններն և պսակագրութիւններն հրամայել և ճանապարհորդաց անցադրերը վաւերել ի դիմաց Պատրիարքին, թէ՛ Պօլսեքնակ և թէ՛ գաւառաքնակ ազգայնոց վիճակագրութեանն հոգ տանիլ. Պատրիարքաբանի ներքին բարեկարգութեան հսկել. Պատրիարքարան դիմող ազքատ ազգայնոց վիճակն ստուգել և արժանաւորները թաղային մատակարարութեանց յանձնարարել. բանտարկեալ ազգայնոց վիճակին վերահասու լինիլ, և Դատական խորհրդականին կարծիքն առնելով՝ կարելի օգնութիւնն ընել նոցա. վարչական մարմնոց կողմէ յանձնարարեալ խնդիրները տնօրինել, և առ ինքն հասած վէճերն իրաւախոհութեամբ կարգադրել :



ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 8. վարչական խորհուրդը կը բաղկանայ Տէրութեան և Ազգային օրինաց հմուտ վեց խորհրդականներէ, որոց իւրաքանչիւրն՝ ըստ իւրեանց յանձնառութեան՝ վարչական գործոց մէջ մի ճիւղերուն կը յատկանան, և նոցա տնօրինումն ու հսկողութիւնը կ'ստանձնեն, հետևեալ բաժանմամբ .

- 1. Կրօնական գործոց
- 2. Յարաբերական »
- 3. Ներքին »

- 4. Դատական »
- 5. Կրթական »
- 6. Տնտեսական »

Յօդ. 9. վարչական խորհրդոյ վեց անդամք Ազգային ժողովոյ մեծամասնութեան վտահոթութիւնը վայելող ձեռնհաս անձինք պէտք է լինին, զորս Պատրիարքն ընտրելով կը ներկայէ առ Ազգային ժողովն, միանգամայն և առ Բ. Դուռն :

Յօդ. 10. վարչական խորհրդէն որ և է պատճառաւ պակսող խորհրդականին տեղ՝ Պատրիարքն անյապաղ նոր մը կ'ընտրէ, մնացեալ անդամոց կարծիքն ստանալէ յետոյ :

Յօդ. 11. վարչական խորհրդոյ պաշտօնն երկու տարի կը տեւէ, և անդամք վերընտրելի են :

Յօդ. 12. Իւրաքանչիւր խորհրդական առ նուազն շաբաթը մի անգամ կերթայ ի Պատրիարքարան, և իւր ճիւղին վերաբերեալ խնդիրները վարչութեան ներքին կանոնագրին համաձայն կը տնօրինէ, ի հարկին Պատրիարքին հետ խորհրդակցելով, իսկ իւր ձեռնհասութեանէն վեր դատած խնդրոց տնօրէնութիւնն ու պատասխանատուութիւնը վարչական խորհրդոյ կը թողու :

Այն խնդիրներն, որք մէկէն աւելի ճիւղերու կը վերաբերին, ձեռնհաս խորհրդականաց միաբան գործակցութեամբ կը տնօրինուին :

Յօդ. 13. վարչական խորհուրդն առ նուազն ամիսն երկու անգամ ի նիստ կը

դուսարի, և որոշեալ ժամուն ներկայից մեծագոյն մասամբ կը տնօրինէ կանխաւ հաղորդուած օրակարգին մէջ նշանակեալ խնդիրները. միանգամայն և կը տեղեկանայ խորհրդականաց առանձինն կատարած տնօրէնութեանց :

Յօդ. 14. վարչական խորհրդականք պատասխանատու են առ Ազգային ժողովն, մէն մի խորհրդական՝ իւրեան յատուկ ճիւղին համար անհատաբար, իսկ հանրական խնդրոց համար՝ ամենքն հաւաքաբար :

Յօդ. 15. վարչական խորհուրդն՝ իւր անմիջական իրաւասութեան ենթարկեալ ազգային հաստատութեանց համար՝ մատակարար հոգաբարձութիւններ կը կարգէ, ձեռնհաս խորհրդականին կարծիքն ստանալէ յետոյ :

Նմանապէս անձնիւր խորհրդական իրաւունք ունի՝ իւր ձեռնհասութեան պատկանեալ խնդրոց համար՝ ի հարկին առժամանակեայ Մասնախմբեր կարգելու :

Սոյն հոգաբարձութիւնք և Մասնախումբք Պատրիարքին կողմէ կը կոչուին 'ի պաշտօն, և զիրենք ընտրող մարմնոյն պատասխանատու մնալով կը գործեն :

Յօդ. 16. Իւրաքանչիւր խորհրդական իւր պաշտօնին յատուկ դիւանագրք պիւրներն ինք կ'ընտրէ, և իւր ճիւղին ծախուց համար Ելմտացոյցին մէջ նշանակեալ գումարին համեմատութեամբ նոցա թոշակը կը սահմանէ, և վարչական խորհրդոյ հաւանութեանն ենթարկելէ յետոյ՝ Պատրիարքին կը ներկայէ, որ կ'անուանէ զնոսա :

Յօդ. 17. Վարչական խորհրդականք չեն կրնար ստորադաս համարատու ճիւղերու մէջ միանգամայն պաշտօն վարել. նմանապէս և չեն կրնար Ազգային Ժողովոյ Մայր և Նախաքննիչ Դիւանաց և Կրօնային ու Քաղաքային Ատենից անդամ լինիլ :

Յօդ. 18. Վարչական խորհրդականք և ազգային կեդրոնական վարչութեան մասնակցող ամեն կարգի անթոշակ պաշտօնատարք՝ իւրեանց երթեւեկի ծախսոց փոխարինութեան համար՝ որոշեալ դուրս մը կ'ստանան կեդրոնական անտուկէն: Սոյն փոխարինութեան աստիճանն ու քանակութիւնը մասնաւոր կանոնադրով պիտի սահմանուին Ազգային Ժողովէն, ըստ առաջարկութեան վարչական խորհրդոյ :

Կրօնական Խորհրդական

Յօդ. 19. Կրօնական խորհրդականին պաշտօնն է՝ Ազգին կրօնական գործոց տեսչութիւնն : Իւր պարտաւորութիւնքն են՝ եկեղեցական պաշտամանց, ընթերցումածոց և երգեցմանց կանոնաւորութեան ինչպէս նաեւ ազգային վարժարանաց և ընծայարանաց մէջ Քրիստոնէական կրօնի ուսուցման հսկել. կրօնագիտութեան և երգեցմանց դասագրքերն ու դասատուներն որոշել և արտօնել, նոյնպէս և եկեղեցական գրեանց տպագրութիւնն արտօնել, ուսեալ և արժանաւոր եկեղեցականներ հասցնելու, եկեղեցականաց վիճակը բարւոքելու և նոցա ապագայն ապահովելու հոգ տանիլ :

Կրօնական խորհրդականը Պոլիս գտնուող կամ վիճակաւոր Եպիսկոպոս-

ներէ մին կը լինի : Եթէ վիճակաւորներէ լինի ընտրեալն, իւր վիճակը փոխանորդով մի կը կառավարէ, զրուսն իւր պաշտօնավարութեան :

Յօդ. 20. Կրօնական խորհրդականը կ'առաջարկէ Կ. Պօլսոյ եկեղեցեաց Քարոզիչներն ու Աւագ Քահանայներն, և Պատրիարքը կ'անուանէ :

Յարաբերական Խորհրդական

Յօդ. 21. Յարաբերական խորհրդականին պաշտօնն է՝ Տէրութեան և ուրիշ ազգաց հետ յարաբերութեանց ընդհանուր տեսչութիւնն. յարաբերութիւնք՝ որք կը ծագին Ազգին առանձնաշնորհութիւններէն և աւանդական սովորութիւններէն : Իւր պարտաւորութիւնքն են՝ Ազգին իրաւունքն ու արտօնութիւններն անվճար պահելու և արդիւնաւորելու աշխատիլ, և քննել ու որոշել այն ամեն խնդիրներն՝ որք Տէրութեան և ուրիշ ազգաց հետ բանակցութեան կը կարօտին :

Ներքին գործոց Խորհրդական

Յօդ. 22. Ներքին գործոց խորհրդականին պաշտօնն է՝ առաջնորդական վիճակաց և Կ. Պօլսոյ թաղերուն հետ յարաբերութեանց ընդհանուր տեսչութիւնն : Իւր պարտաւորութիւնքն են՝ Ազգային Սահմանադրութեան և օրինաց ամենուրեք գործադրութեան հոգ տանիլ. ներքին բարեկարգութեան հսկել. ազգայնոց նիւթական զարգացման միջոցներուն զբաղիլ, և քննել ու որոշել ա-

առաջնորդական վիճակներուն և Կ. Պօլսոյ թաղերուն վերաբերեալ օրինական և վարչական խնդիրներն :

Դատական Խորհրդական

Յօդ. 23. Դատական խորհրդականին պաշտօնն է՝ ազգային դատական գործոց ընդհանուր տեսչութիւնն : Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգայնոց բողոքներուն և դատերուն օրինաւոր քննութեան և վճռոց ճշդիւ գործադրութեանն հսկել. Բ. Դունէն և Պատրիարքէն յանձնարարեալ դատերը ձեռնհաս դատարանաց յղել, և ազգային դատական օրինաց ճշդիւ կիրառութիւնը պաշտպանել :

Կրթական Խորհրդական

Յօդ. 24. Կրթական խորհրդականին պաշտօնն է՝ ազգային կրթութեան ընդհանուր տեսչութիւնն : Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգային կրթութիւնն ընդհանրացնելու և զարգացնելու միջոցները քաջալերել. ազգային վարժարանաց, ընծայարանաց և մատենադարանաց վրայ հսկել. մանկավարժներն ու դասատուներն արտօնել, նոցա կացութիւնը բարւոքելու, ապագայն ապահովելու և հետզհետէ լաւագոյններն հասցնելու հոգ տանիլ. ազգային վարժարանաց դասագրքերն որոշել, և ազգային կրթութեան աշխատող անհատից և մարմնոց ուղղութեանն հսկել :

Տնտեսական Խորհրդական

Յօդ. 25. Տնտեսական խորհրդա-

կանին պաշտօնն է՝ եկեղեցեաց, վարժարանաց, վանօրէից և այլ ամենայն ազգային հաստատութեանց անտեսական ընդհանուր տեսչութիւնը : Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգային սեփականութեանց անկորուստ պահպանութեան, նոցա պատկանեալ գոյից, կալուածոց և հաստից կանոնաւոր արձանագրութեան և պարբերական համարատուութեան, վազըֆաց ու կտակաց անվրէպ գործադրութեան, նոյնպէս և յանուն ազգին եղած հանգանակութեանց ճշդիւ իւրեանց նպատակին գործածութեան հսկել. Կ. Պօլսոյ մէջ շինութեանց, նորոգութեանց և գնմանց խնդիրները տնօրինել. իսկ ապառիկ գնմանց կամ վաճառմանց և փոխառութեանց վերաբերեալ խնդիրները՝ վարչական խորհրդին կարծիքն ստանալով արտօնել. կեդրոնական անտուկին ելումուտըր տնտեսել, ըստ որոշեալ ելմիտացոյցին. և ուղղակի ու անուղղակի տրոց կանոնաւորապէս բաշխման և հաւաքման հոգ տանիլ :

ԳԼՈՒԽ Բ.

ԴԱՏԱՐԱՆՔ

Յօդ. 26. Ազգային դատական իշխանութիւնն երեք աստիճանի իրաւասութեամբ ՚ի գործ կը դրուի, թաղային, կեդրոնական և բարձրագոյն դատարաններու միջոցաւ :

Յօդ. 27. Որ և է խնդիր, ՚ի բաց առեալ ազգային պաշտօնակալաց և եկեղեցականաց պաշտաման վերաբերեալ-

ներն, (Տե՛ս Յօդ. 35 և 41) նախ՝ ամբաստանեալ կողման թաղային Գատարանին կը ներկայանայ. և երբ հաշտարարութեամբ չվերջանայ, Կեդրոնական Գատարանին կուգայ. իսկ երբ հակառակորդք սորա վճռոյն չհաւանին, Բարձրագոյն Գատարանին կը դիմեն՝ վերաքննութեան համար:

Յօդ. 28. Ամեն կարգի դատաւորք երկու տարուան համար կ'ընտրուին, և վերընտրելի են:

Թաղային Գատարանք

Յօդ. 29. Թաղային Գատարաններուն պաշտօնն է՝ առ ինքեանս յանձնարարեալ խնդիրներն ու վէճերը հաշտարարութեամբ լուծելու աշխատիլ. և երբ չյաջողին՝ տեղեկագրել առ Գատարան Խորհրդականն, որ կը յղէ զխնդիրն առ պատկանեալ Սենեակ Կեդրոնական Գատարանին:

Յօդ. 30. Թաղային Գատարանները կը կազմուին՝ թաղական Խորհրդէն դուրս և անկից ընտրեալ բանիբուն, ամուսնացեալ և թաղեցւոց վստահութիւնը լիովին վայելող երկու անձերէ, և թաղին եկեղեցական դասէն ընտրեալ մի քահանայէ:

Բ.

Կեդրոնական Գատարան

Յօդ. 31. Կեդրոնական Գատարանն երեք Սենեակներու կը բաժնուի, Ամուսնական, Անհատական և Վարչական. և

իւր պաշտօնն է՝ սոցա միջոցաւ քննել և վճռել ազգային շրջանակին մէջ տեղի ունեցած ամեն դատերն:

Յօդ. 32. Կեդրոնական Գատարանի անդամք Վարչական Խորհրդէն կ'ընտրուին, ըստ առաջարկութեան Գատարան Խորհրդականին:

Ամուսնական Սենեակ

Յօդ. 33. Ամուսնական Սենեակը կը կազմուի, 40 տարին լրացուցած, ամուսնացեալ և Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինաց հմուտ հինգ ձեռնհաս անձերէ, որոց երեքն Եկեղեցական պէտք է լինին: Այս Սենեակին կը պատկանին բոլոր ամուսնական դատերն:

Անհատական Սենեակ

Յօդ. 34. Անհատական Սենեակը կը կազմուի, 30 տարին լրացուցած և Տէրութեան օրինաց հմուտ հինգ ձեռնհաս անձերէ:

Այս Սենեակին կը պատկանին՝ ժառանգական, կտակային, ընտանեկան, պատուոյ և ֆրասու հատուցման, և այլ ամենայն անհատական դատերն:

Վարչական Սենեակ

Յօդ. 35. Վարչական Սենեակը կը կազմուի, 30 տարին լրացուցած և վարչական օրինաց հմուտ հինգ ձեռնհաս անձերէ:

Այս Սենեակին կը պատկանին՝ բաց ՚ի վարչական Խորհրդոյ և դատական Բարձ-

րագոյն Ատենի անդամներէն՝ բոլոր առաջնորդական, վանական, թաղային և այլ ամենայն ազգային պաշտօնատարաց, մանկավարժից և դասատուաց պաշտօնին ու պարտաւորութեան ինչպէս նաև ընտրական իրաւանց և ազգային հրատարակութեանց վերաբերեալ դատերն:

Գ.

Բարձրագոյն Գատարան

Յօդ. 36. Բարձրագոյն Գատարանը կը կազմուի Կրօնային և Քաղաքային երկու Ատեններէն, որոց առաջինը կը բաղկանայ հինգ օրէնսդէտ եկեղեցականներէ, և միւսը՝ հինգ օրէնսդէտ աշխարհականներէ: Այս երկու Ատենները միանալով կը կազմեն Խառն Ատենը:

Յօդ. 37. Կրօնային և Քաղաքային Ատեններն Ազգային Ժողովէն կ'ընտրուին, Ատենապետաց Դիւանին ներկայած սրբադրելի ցանկերուն վրայ:

Կրօնային Ատենին համար Ատենապետաց Դիւանին կողմէ ներկայելի ցանկը քաղեալ պիտի լինի Եկեղեցական Վիճակային Ժողովէն պատրաստուած եռապատիկ ցանկին մէջէն:

Կրօնային Ատեն

Յօդ. 38. Կրօնային Ատենին պաշտօնն է՝ վերաքննել Կեդրոնական Գատարանին վճռած այն խնդիրներն, որք զուտ կրօնական հանդամանք ունին:

Քաղաքային Ատեն

Յօդ. 39. Քաղաքային Ատենին պաշտօնն է՝ վերաքննել Կեդրոնական Գատարանին վճռած այն խնդիրներն, որք զուտ քաղաքական հանդամանք ունին:

Խառն Ատեն

Յօդ. 40. Խառն Ատենին պաշտօնն է՝ վերաքննել Կեդրոնական Գատարանին վճռած այն խնդիրներն, որք կրօնական և քաղաքական հանդամանք միանգամայն ունին:

ԳՂՈՒԽ Գ.

ԿՐՕՆԱՅԻՆ ԱՏԵՆԻՆ ԿԵՐԱՔԵՐԵԱԼ ՄԱՍՆԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՎԵՐԱՔՆՆԵՐԵԱԼ ԽՈՐՀՈՐԴԻ ՆԵՐԿԱՅԻՆ ԳՂՈՒՅԻՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԱԾ ԱՅՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ

Յօդ. 41. Կրօնային Ատենին պաշտօնն է նաև՝ Ազգին կրօնական դործոց ընդհանուր տեսչութիւնն: Իւր պարտաւորութիւնքն են՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն անեղծ պահել տալ. կրօնական զգացումն ազգին մէջ զարգացընելու ջանալ. Եկեղեցւոց և եկեղեցականաց բարեկարգութեան հսկել. և ազգին մէջ ծագած կրօնական խնդիրներն ու վէճերը քննել և լուծել:

Սոյն Ատենը կը քննէ և կը դատէ եկեղեցականաց պաշտօնին և պարտաւորութեանց վերաբերեալ խնդիրները:

Նմանապէս ձեռնադրութեան համար ներկայացեալ ընծայացուաց արժա-

նիքը կը քննէ, կ'ստուգէ և նոցա ընդունելու թիւերը կ'որոշէ: Նոյնպէս կը հսկէ Գալլացի դատուն վրայ, և զարժանաւորս 'ի պաշտօնն զպրուծեան կը կոչէ:

Յօդ. 42. Կրօնային Ատեանք՝ կրօնական դործոց համար՝ կը գումարի, ընդ նախագահութեամբ Պատրիարքին և գերնախագահութեամբ Կրօնական Խորհրդականին:

Յօդ. 43. Քահանայի ձեռնադրութիւն չկրնար կատարուիլ Կ. Պօլսոյ մէջ, մինչև որ Կրօնական Խորհրդականին առաջարկութեան վրայ Պատրիարքին կողմէ արտօնեալ չլինի. և այս արտօնութիւնը չկրնար տրուիլ, մինչև որ թաղի մը Քահանայից դասն ու Թաղական Խորհուրդն ստորագրեալ տեղեկագրով չը խնդրեն, ընծայացուն վարուց ու բարուց համար չվկայեն, և նորա ապրուստին ապահովութիւնը չերաշխաւորեն:

Սոյն պայմաններուն համեմատ կը կատարի նաև գաւառացի մէջ քահանայից ձեռնադրութիւնը, գաւառին Առաջնորդ Եպիսկոպոսին ձեռօք: Իսկ Առաջնորդն՝ եթէ Եպիսկոպոս չէ՝ ձեռնադրութիւնը սահմանակից վիճակաւոր Եպիսկոպոսին կը յանձնէ:

Նմանապէս կուսակրօն եկեղեցականի ձեռնադրութիւն՝ թէ՛ ի Կ. Պօլսոս և թէ՛ ի գաւառս՝ չկրնար կատարիլ, մինչև որ Եպիսկոպոսի մը կամ վանական Միաբանութեան մը կողմանէ ընծայացուն բարուց և վարուց համար գրաւոր վկայութիւն չտրուի, ուսման մասին պաշտօնական քննութենէ չանցնի և Պատրիարքէն արտօնեալ չլինի:

Իսկ առաջնորդի մը եպիսկոպոսանալուն համար Գաւառական Ժողովոյ տեղեկագիրը Կրօնային Ատենին մէջ ըննուելէ յետոյ, վկայականը Պատրիարքէն կը կնքուի, ըստ առաջարկութեան Կրօնական Խորհրդականին:


Յօդ. 44. Երբ Կրօնային Ատեանը խնդիր մ'իւր ձեռնհասութենէն վեր գատէ, կամ երբ Պատրիարքն և կամ Կրօնական Խորհրդականը չհաւանին Կրօնային Ատենին որոշման, Պատրիարքին հըրաւիրանաց վրայ Եկեղեցական Վիճակային Ժողով կը գումարի և խնդիրը նորա որոշման կ'ենթարկի:

Յօդ. 45. Եկեղեցական Վիճակային Ժողովը կը բաղկանայ, Կ. Պօլսոյ մէջ գտնուող Եպիսկոպոսներէ և Առաջնորդ կամ վանահայր վարդապետներէ, Երուսաղէմացի և Կ. Պօլսոյ Պատրիարքական Փոխանորդներէն, և Կ. Պօլսոյ Եկեղեցացի քարտղիներէն և աւագ քահանայներէն, ի բաց առեալ վարչութեան կողմէ ընդ գատաստանաւ ճանչուած եկեղեցականներն: Իւր պաշտօննէ՝ կաթողիկոսական և Պատրիարքական և Կրօնային Ատենի անդամակցութեան ընտրելեաց ցանկերը պատրաստել և առ ինքն յանձնարարեալ խընդիրները լուծել:

Եկեղեցական Վիճակային Ժողով

Ի հարկին գաւառացի Առաջնորդներն ալ կը հրաւիրուին Եկեղեցական Վիճակային Ժողովին, մանաւանդ բարձրագոյն կարեւորութիւն ունեցող կրօնական խնդրոց լուծման և կաթողիկոսական ընտրելեաց ցանկի պատրաստութեան համար:

Յօդ. 46. Եկեղեցական Վիճակային Ժողովն՝ երբ խնդիր մ'իւր ձեռնհասութենէն վեր գատէ, Արարատեան Մայր Աթոռոյ կաթողիկոսին կը դիմէ ստորագրելու տեղեկագրով:



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն նախընթաց և. եւ 2. նիստերու Ատենագրութեանց :
2. Ատենական գործողութեանց թղթեր , եւ Մայր զիւանի անդամոց հըրածեչտի խնդիրը .

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ուղերձ ի պատասխանի Նախագահական գրոյն . - Ծրագիր Ատենապետաց զիւանի :

Գիւն 2 դրոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Ա.ԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի եւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ
Եկեղեցւոյ բանկայը եւ Հայ գրավաճառաց քով